**Արձանագրություն N 4**
**Протокол N 4**

**«ԵՔ-ԲՄԾՁԲ-24/14 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի**
**Заседание оценочной комиссии открытого конкурса под кодом «EQ-BMTsDzB-24/14»**

ք.Երևան — 12.09.2024թ ժամը՝ 17:00

г.Ереван — 12.09.2024г. 17:00 часов

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Գյուրջյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գյուրջյան, Խ. Խաչատրյան, Ա. Սարգսյան, Գ. Ութունջյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյան

Председатель комиссии: О. Гюрджян
Члены комисии: А. Гюрджян, Х. Хачатрян, А. Саргсян, Г. Утунджян
Секретарь комисии: Г. Мурадян

1. **Տեղեկություններ «ԵՔ-ԲՄԾՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ստացված հաղորդագրության մասին**
**Информация об оценке заявок на участие в процедуре закупки с кодом «EQ-BMTsDzB-24/14»**

(Հ. Գյուրջյան О. Гюрджян)

Ընդունել ի գիտություն, որ սույն թվականի սեպտեմբերի 12-ին գնահատող հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային հասցեին /gor.muradyan@yerevan.am/ Վ. Ղուկասյանի էլեկտրոնային հասցեից՝ /vghukasyan52@yerevan.com/ ստացվել է հետևյալ հաղորդագրությունը՝ «Հայտնում ենք Ձեզ, որ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված թիվ ԵՔ-ԲՄ-ԾՁԲ-24/14 ծածկագրով մրցույթի պահանջներից է եղել, որ մասնակիցը պետք է ունենա հետևյալ լիցենզիաները՝ հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցում (1-ին դաս), շենքերի շինությունների տեխնիկական վիճակի հետազննում և անձնագրավորում, ինժեներաերկրաբանական հետախուզում (1-ին դաս) ներդիրներով: Վերագրյալ լիցենզիաները պահանջել եք պարզաբանման տեսքով, այսինքն այդ պարզաբանումը հանդիսանում է հրավերի անբաժանելի մասը:

Տվյալ մրցույթում ընտրված մասնակից ճանաչված ընկերությունը (ԿԱՄՈՒՐՋՇԻՆ ՓԲԸ) չունի վերոգրյալ ոչմի լիցենզիա……:»

Վերոգրյալով պայմանավորված գնահատող հանձնաժողովը ստուգելով վերը նշված տեղեկատվությունը, արձանագրել է, որ համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրամադրվող լիցենզիաների էլեկտրոնային գրանցամատյանի «ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲԸ-ն չունի գնման առարկա հանդիսացող ծառայությունների մատուցման համար պահանջվող հետեւյալ լիցենզիաները՝ հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցում (1-ին դաս), շենքերի շինությունների տեխնիկական վիճակի հետազննում եւ անձնագրավորում, ինժեներաերկրաբանական հետախուզում (1-ին դաս) ներդիրներով:

Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը որոշել է, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N.526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 67-րդ կետը, ինչպես նաև «ԵՔ-ԲՄԾՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.21 կետը, որոշեց հարցում կատարել ՀՀ քաղաքաշինության կոմիտե «ԿԱՄՈՒՐՋՇԻՆ» ՓԲԸ-ի մոտ գնման առարկա

հանդիսացող ծառայությունների մատուցման համար պահանջվող լիցենզիաներին կից ներդիրների առկայությունը ստուգելու նպատակով:

Գնահատող հանձնաժողովը որոշեց մյուս նիստը հրավիրել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տարամդրված տեղեկատվությունը ստանալու հաջորդ աշխատանքային օրը ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեում՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի 127 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:
Принято решение за- 5, против - 0.

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.
Имена и фамилии членов комиссии присутствующих на заседании.

| | | | |
|---|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ Председатель комиссии | | Հ. Գյուրջյան | О. Гюрджян |
| Անդամներ՝ Члены комиссия | | Ա. Գյուրջյան | А. Гюрджян |
| | | Խ. Խաչատրյան | Х. Хачатрян |
| | | Ա. Սարգսյան | А. Саргсян |
| | | Գ. Ութունջյան | Г. Утунджян |
| Համակարգող՝ Секретарь комиссии | | Գ. Մուրադյան | Г. Мурадян |